ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-ԷՍ-2019/05

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.01.2019թ. թիվ 26-3/193-19 գրությամբ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի 27.12.2018թ. թիվ 1425 գրության հիման վրա, 10.01.2019թ. «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ը 27.12.2018թ. թիվ 1425 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ կազմակերպված ՄՔ-ԳՀԱՊՁԲ-02/19 ծածկագրով սեղմված բնական գազ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի 1 չափաբաժնով՝ (սեղմված բնական գազ), առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն, սակայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 1.396.728 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր քսանութ) ՀՀ դրամի չափով:»:

«Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՀՈԱԿ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լարգո Վինչ» ՍՊԸ-ն 25.02.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 14.12.2018թ. գնման մրցույթին մասնակցելու օրվա դրությամբ առկա հարկային պարտավորությունը հետևանք է տեխնիկական վրիպակի: 13.11.2018թ. ՀՀ ՊԵԿ ներկայացված 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում ՀՀ տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվները չեն վավերացվել մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար ՀՕ-ի 75-րդ

հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը (հաջորդ ամսվա 20-ը) ներառյալ, սակայն համաձայն վերը նշված ստացված հարկային հաշիվների մինչև 20.11.2018թ. կատարվել է համապատասխան ապրանքների և ծառայությունների դիմաց բացառապես բոլոր կրեդիտորական պարտքերի մարում (հատկապես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հոկտեմբեր ամսվա ընթացքում մատակարարած բնական սեղմված գազի դիմաց): Կազմակերպությունը չի թաքցրել իրացման շրջանառությունը, որն ակներև է նաև 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում), կատարվել է հարկային պարտավորությունների մարում ամբողջությամբ: 28.11.2018թ. դրությամբ Ընկերության հարկային պարտավորությունը կազմել է 27.631 դրամ, որը սակայն ոչ թե կազմակերպության հարկերն ուշ վճարելու արդյունք է եղել, այլ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Հրազդան» մասնաճյուղում 20.09.2018թ. ժամը 14:08-ին հարկային պարտավորության մարման նպատակով փոխանցված գումարը Կենտրոնական գանձապետարանի հաշվին մուտք է եղել 24.09.2018թ.: Համաձայն 29.11.2018թ. ՀՀ ՊԵԿ- N1743/2018/Ծ-Վ3 էլեկտրոնային ծանուցման չի կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2016թ. դեկտեմբերի 30-ի N 298-Ն հրամանի 1-ին հավելվածի 22-րդ կետի պահանջները, հետևաբար 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում հաշվանցված ԱԱՀ գումարը ճանաչվել են անվավեր:

29.11.2018թ. էլեկտրոնային եղանակով ՀՀ ՊԵԿ է ներկայացվել 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի ճշտված միասնական հաշվարկ, որի արդյունքում առաջացել է հարկային պարտավորություն, որն ակնհայտ իրացման շրջանառության կամ ծավալների պակաս ցույց տալու կամ թաքցնելու արդյունք չէ, սակայն ինչի հետևանքով մինչ այդ պակաս չի վճարվել պետական բյուջե վճարվելիք հարկերը:

2018թ. հոկտեմբեր ամսում ՀՀ տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվները վավերացվել են 29.11.2018թ.: 11.12.2018թ. ՀՀ ՊԵԿ է ներկայացվել 2018թ. նոյեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի ճշտված միասնական հաշվարկ, որի 20-րդ կետում ճշգրտվել և ավելացվել է վերոնշյան անվավեր ճանաչված ԱԱՀ-ի գումարը համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 71-րդ հոդվածի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2016թ-ի դեկտեմբերի 30-ի N 298-

Ն հրամանի 1-ին հավելվածի 24-րդ կետի: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ և 99-րդ հոդվածների հաշվետու ժամանակաշրջանում առաջացած պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20 ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

Արդյունքում, 14.12.2018թ. գնման մրցույթին մասնակցելու ամսաթվի դրությամբ արտացոլվել է հարկային պարտավորություն: 24.12.2018թ. համաձայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկանքի, ՍՊԸ-ն հարկային պարտավորություն չուներ:

2018թ.-ի օգոստոս ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած հարկային պարտավորությունները մարվել են 20.09.2018թ.-ին «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Հրազդան» մասնաճյուղում N 27 վճարման հանձնարարականով, սակայն միասնական հաշվին մուտք է եղել 24.09.2018թ., ինչի արդյունքում հաշվարկվել է տույժ:

Ելնելով վերոգրյալից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը օրենքով սահմանված ժամկետում կատարել է հարկային վճարումները, խնդրում եմ հաշվարկված տույժի գումարները վերացնել:

Ուստի խնդրում եմ 14.12.2018թ. դրությամբ հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացված տեղեկանքում արտացոլված պարտավորությունը համարել անհիմն, ինչպես նաև վերահաշվարկել 2018թ. օգոստոս ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած հարկային պարտավորությունների վրա հաշվարկված տույժի գումարները: Քանի որ նշված պարտավորությունների հետևանքով մեր Ընկերության վարքագիծը դիտարկվում է բացասական:»

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Դավիթ Աբրահամյանը և Արամ Պոտրոսյանը:

4. ՍՑ-ԷՍ-2019/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.01.2019թ. թիվ 26-3/193-19 գրությունը, «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի 27.12.2018թ. թիվ 1425 գրությունը և կից փաստաթղթերը, «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի կողմից 25.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկաացված գրավոր դիրքորոշումը, ՄՔ-ԳՀԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՄՔ-ԳՀԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 18.12.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 2 և 24.12.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացությունը.

«Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՄՔ-ԳՀԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն:

«Լարգո Վինչ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՄՔ-ԳՀԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«Լարգո Վինչ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է՝ 1.850.000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 18.12.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 3.1 կետով որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած ճանաչել «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին:

- 4.1 կետով որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 1.396.728 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 24.11.2018թ. կայացած նիստին թիվ 3 արձանագրության՝

- 1-ին կետով արձանագրել է, որ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն:

- 2-րդ կետով որոշել է «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը

ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԿՏ-ԳՀԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.
- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը

մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (14.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 1.396.728 ՀՀ դրամ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է ՄՔ-ԳՀԱՊՁԲ-02/19 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.01.2019թ. թիվ 26-3/197-19 գրությամբ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ